# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

## ԹԵՄԱ՝ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

**Կազմեց՝ Լուսինե Մկրտչյան,2-րդ խումբ**

**Կապանի թիվ 7 հիմնական դպրոց**

**Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան**

**<Կապանի N2 ավագ դպրոց>ՊՈԱԿ**



# Բովանդակություն

Բովանդակություն ---------- —2

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ I. Հանրակրթական դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ձևերի հիմնավորում

1.1 Հիմնահարցի վերաբերյալ մեթոդական գրականության վերլուծություն: ՏՀՏ –ի դրական և բացասական ազդեցությունը ----------4

1 .2 Հանրակրթական դպրոցում ՏՏ-ի կիրառման հնարավորություններն ու առավելությունները----------7

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիմնական ուղղություններ ——---------8

1. 3 Տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կանոնները----------9

ԳԼՈՒԽ II. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման իմ փորձից փորձարարական աշխատանքի արդյունքների վերլուծություն

2. 1 Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող դասի պլանների կազմում, դրանց փորձարկում----------11

Տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով և առանց դրանց վարած դասերի առավելություններն ու բացասական կողմերը.----------13

Եզրակացություն----------15

Գրականության ցանկ----------16

Հավելված---------- 17

# Ներածություն

**Հիմնախնդրի արդիականությունը** Տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաները արդեն իսկ դարձել են մեր կրթական համակարգի անբաժանելի մասը, 21-րդ դարի հրամայականը։Հետազոտական այս աշխատանքում փորձել եմ վեր հանել կրթության և ՏՏ-ի միջև գոյություն ունեցող ամուր կապը, ՏՏ-ի միջոցով կրթությունն ավելի հասանելի դարձնելը և ներկայացնել դրանց դրական և բացասական ազդեցությունները: Արդի հանրակրթության ոլորտում և գործընթացում տեղեկատվության հագեցվածությունը դասը դարձնում է ծանրաբեռնված դպրոցականների համար։Մայրենի դասաժամերին մտավոր ծանրաբեռնվածությունը ստիպում է մտածել այն մասին, թե ինչպես նպաստել ուսումնասիրվող նյութի նկատմամբ սովորողների հետաքրքրության առաջացմանն ու ողջ դասի ընթացքում նրանց ակտիվ գործունեության ապահովմանը: Կարևոր դերն այստեղ ստանձնում են տեղեկատվական տեխնոլոգիաները, քանի որ ժամանակակից կրթական գործընթացն անհնար է պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների։

**Ուսումնասիրության նպատակը**.

Դիտարկել միջին դասարաններում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցները և բացահայտել դրանց կիրառման արդյունավետությունը մայրենիի դասընթացում:

**Ուսումնասիրության խնդիրները**.

1.Ուսումնասիրել և վերլուծել միջին դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները,դրանց դրական և բացասական ազդեցությունը։

2.Մշակել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող դասերի պլաններ և դրանք փորձարկել մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

**Ուսումնասիրության նորույթը**.

Մշակել միջին դասարաններում կրթական գործընթացում տեղեկատվական տեղնոլոգիաների կիրառման ուղիներ և միջոցներ, որոնց արդյունքում դասը կլինի ավելի արդյունավետ:

## ԳԼՈՒԽ Ի.Հանրակրթական դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ձևերի հիմնավորում

### 1.1 Հիմնահարցի վերաբերյալ մեթոդական գրականության վերլուծություն: ՏՀՏ –ի դրական և բացասական ազդեցությունը

**«Առանց նորին ձգտելու, չկա կյանք, չկա զարգացում, չկա առաջընթաց»**

**Վ.Գ. Բելինսկի**

Արդի հանրակրթության ոլորտում օրըստօրե լայն կիրառում է ստանում ուսուցման տեղեկատվական տեխնոլոգիաների և ուսումնական գործընթացի արդյունավետությունն ու աշակերտների հետաքրքրության բարձրացմանը նպաստող տարաբնույթ մեդիամիջոցները [10, էջ 281]:
Տեղեկատվական տեխնոլոգիաները ընձեռում են մի գրավիչ ուսուցողական միջավայր մուտք գործելու հնարավորություն, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, ամենակարևորը՝ գիտելիքի ձեռքբերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, վերափոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ:
Ի վերջո տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս ուսուցչին ու աշակերտին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»: Տեղեկատվական տեխնոլոգիաներն ունեն նորարարության զարգացումն արագացնելու,սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց ակտիվությունը բարձրացնելու և ուսումնական գործընթացի մեջ ներգրավվելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցականներին վերափոխել:
Աշխատանքս սկսել եմ Ադամ Մերենյի, Վինցե Սաբո և Աթիլլա Տակաչի կողմից կազմված ժողովածուի ուսումնասիրությունից: Ժողովածուում նշվում և կարևորվում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման կարևորությունը ուսումնական դասընթացների ընթացքում: «Տեղեկատվության աղբյուրն այլևս գրքերն ու ուսուցիչները չեն, այլ՝ իրական կյանքը: Խմբային աշխատանքի միջոցով աշակերտները հնարավորություն ունեն իրական կյանքի նմանեցված իրավիճակներում որոնելու իրական խնդիրների լուծումներ՝ օգտագործելով տարբեր ձևեր և տարատեսակ եղանակներ: Կառուցողական մանկավարժության համար անհրաժեշտ են ուսման հատուկ պայմաններ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին համագործակցելու և օգնություն ցուցաբերելու միմյանց [6, էջ 1 ]: Հետաքրքիրն այն է, որ այստեղ ոչ միայն նշված են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման օրինակներ, այլ նաև դրան կից տեղադրված են աշխատանքին համապատասխան համակարգչային ծրագրերի անուններ, դրանցից օգտվելու կանոններ: Ըստ ժողովածուի՝ ժամանակակից ուսուցիչը պետք է ընդունի կառուցողական մոտեցում և կիրառի դասավանդման նորարարական մեթոդներ՝ նկատի ունենալով, որ դասարանում կատարվող աշխատանքին կարող են օժանդակել ժամանակակից տեղեկատվական

տեխնոլոգիաները , սարքավորումները և համակարգչային ծրագրերը: Անառարկելի է, որ նոր կրթական տեխնոլոգիաների ներդրումը միջին դպրոցում արդյունավետ կլինի, եթե կարևորվի ուսուցման գործընթացի առավելությունները:Օրինակ՝ ճիշտ է թղթային դասագրքերն ընդլայնեցին սովորողների ուսումնասիրության մեջ ընդգրկման շրջանակը, սակայն չկարողացան բավարար չափով ապահովել հետադարձ կապի արդյունավետությունը: Թվային տեխնոլոգիաների կիրառումը, ժողովածուի հեղինակների կարծիքով, պետք է ծառայի հենց այդ բաց թողումների լրացմանը: Ժողովածուում ներառված են տեղեկություններ համացանցի, դպրոցականի համար օգտակար համակարգչային ծրագրերի և դրանից օգտվելու կանոնների մասին:Նշենք, որ հանրակրթության համակարգում աստիճանաբար լայնորեն կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաները, որի համար դպրոցներում պիտի շարունակվեն բացվել համակարգչային դասարաններ, որոնք ապահովված կլինեն համացանցով: Գիտամեթոդական հանդեսում նշվում են, որ թեև տեխնոլոգիաները նպաստում են կրթության որակի բարձրացմանը, սակայն չի՛ կարելի համակարգչի առջև երեխաներին առանց հետևելու թողնել, այն լի է իրական վտանգներով: Կրթության ոլորտում ՏՏ-ի ակտիվ և արդյունավետ իրականացումը կարևոր գործոն է հանդիսանում կրթական համակարգ ստեղծելու համար,որը համապատասխանում է ուսումնական հաստատությունների պահանջներին» [9, էջ 2]:Տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման խնդրին անդրադարձել են նաև Ս. Ա. Մուխինան և Ա. Ա. Սոլովևան: Ներկայացնելով կրթական գործընթացում ժամանակակի մանկավարժական տեխնոլոգիաների օգտագործման խնդիրները՝ նրանք փորձել են քննարկել իրենց փորձը՝ կիրառելով ուսուցման ակտիվ մեթոդներ, ինչպիսիք են՝ ոչ ավանդական դասախոսությունները, քննարկումները, խաղային մեթոդները և այլն: Այս խնդրին իրենց ուսումնամեթոդական ձեռնարկում անդրադարձել են նաև Ա. Օ. Թոփուզյանը, Ջ. Հ. Գյուլամիրյանը, Լ. Մ. Պողոսյանը, Ս. Մ. Ասատրյանը, Ն. Զ. Կարապետյանը, Լ. Մ. Ավագյանը : Նրանք, ներկայացնելով դասերի պլաններ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, քննարկել են այս խնդիրը: Այս գաղափարին իր աշխատություններում անդրադարձել է, նաև Յակովլևը, ով առաջ է քաշում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության վերաբերյալ մի քանի մոտեցում.

**1.**Կրթության ոլորտում ՏՏ-ի կիրառումը զգալիորեն արագացնում է մարդկության գիտելիքների և կուտակված տեխնոլոգիական ու սոցիալական փորձի փոխանցումը ոչ միայն սերնդեսերունդ, այլ նաև՝ մեկ անձից մյուսին
**2.**ժամանակակից ՏՏ-ները, բարձրացնելով կրթության որակը, մարդուն թույլ են տալիս ավելի հաջող և արագորեն հարմարվել շրջակա միջավայրին :
Այսպիսով, պարզեցինք, որ գոյություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ բազմաթիվ գրքեր, մեթոդական ցուցումներ, որտեղ ներակայացված են ընհանուր դրույթներ տեղեկատվական տեխնոլոգիաների դրական և բացասական կողմերի, դրանց օգտրագործման վերաբերյալ:
21-րդ դարը տեղեկատվական տեխնոլոգիաների կտրուկ զարգացման ժամանակաշրջան բնութագրվելուց բացի, բնութագրվում է նաև դրանից մարդու

կախվածության ժամանակարջան: Մարդկային կյանքի առօրեայի անբաժանելի մասն է դարձել բջջային հեռախոսները, պլանշետները և մյուս էլեկտրոնային սարքավորումները,որոնցով մարդը կազմակերպում է իր առօրյա կյանքը և աշխատանքը: Բնականոն զարգացման երևույթ է, երբ տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց տեղը զիջում են նորերին՝ նոր սերնդի ՏՏ-երին: ՏՏ-ն այսօր համարվում է թիվ 1 տեղեկատուն, այսինքն այն ապահովում է տեղեկատվության մատչելիություն, որը թերևս դրական կողմ է: Տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց զարգացման առավելություններով հանդերձ ունեն նաև բացասական կողմեր:Տեխնոլոգիաների ամենատարածված միջոցի զարգացմանը զուգընթաց վերջին տարիներին սկսել է կիրառվել «համացանցային կախվածություն» եզրույթը:

/Լուսինե Կարապետյան, “Ինտերնետային կախվածության հիմնախնդիրների շուրջ”,էջ 30./

Համացանցի կախվածություն, չարաշահում, հիվանդագին կիրառում. սրանք եզրույթներ են, որոնք բազմաթիվ հետազոտողների քննության առարկա են դարձել: Օրինակ՝ Ք.Յունգը ինտերնետային կախվածությունը որպես հոգեկան առողջության խնդիր որակող տեսաբաններից է: Նա նշում է, որ ինտերնետային կախվածություն կարող է ունենալ յուրաքանչյուրը: Մեկ այլ տեսաբան Մ.Գրիֆիթսը նշում է,որ տեխնոլոգիական կախվածությունը սկզբում դրսևորվում է պասիվ, բայց հետո այն կարող է դառնալ հիվանդագին:

1.Ինֆորմացիան այսօր այնքան հասանելի է, որ մարդը շատ քիչ ջանք ու խելք է օգտագործում այն գտնելու համար: Օրինակ՝ կա լուծում պահանջող խնդիր,որի պատասխանն իմանալու համար այսօր չենք փորձում այն ինքնուրույն լուծել, այլ պարզապես դրա պատասխանը փնտրում ենք ինտերնետում: Բացի այդ որքան էլ վերջինս պարունակում է կարևոր ինֆորմացիա, այն միևնույն ժամանակ տալիս է ստահոդ, կեղծ կամ իրականությանը չհամապատասխանող ինֆորմացիա, որին իր հերթին կարող է առաջացնել լարվածություն և ագրեսիա:

2. ՏՏ-ի բացասական ազդեցություններից է առողջությանը հասցվող վնասը:Շատերը կհակադրվեն այս կարծիքին, հենաբար հիմնավորենք մեր փաստարկը: ՏՏ-ն առաջին հերթին ազդում է մեր տեսողության վրա՝ նրանից երկար ժամանակ օգտվելու դեպքում, երկրորդ՝ այն ազդում է մարդու ամբողջ օրգանիզմի վրա իր արտանետած էլէկտրամագնիսական ճառագայթների պատճառով, ինչն իր հերթին կարող է բերել նյարդային, իմունային և արտանոթային համակարգի խանգարումներ:

3. ՏՏ-ն խնայում է մեր ժամանակը, ասինքն նրա շնորհիվ մեզ անհրաժեշտ ինֆորմացիան ավելի արագ ենք գտնում կամ թեկուզ մարդկանց հետ ավելի արագ կապ հաստատում: Ճիշտ է՝ ոմանք այն օգտագործում են խելամտորեն, ոմանք էլ այն պարզապես դարձրել են միջոց՝ կյանքի թանկարժեք րոպեները սպանելով բջջային հեռախոսներում

4. 21-րդ դարի ՏՏ ոլորտի ամենավնասակար կողմը. մարդը թերևս կարող է սնվել թերի,չքնել կամ պարզապես չհանգստանալ, բայց կարող է մի ամբողջ օր անցկացնել համակարգչի դիմաց, որն էլ իր հերթին առաջ է բերում անքնություն, խրոնիկ մի շարքհիվանդություններ:

5. ՏՏ-ի անսահմանափակ օգտագործման հասցրած մեծագույն վնասներից է նաև

կենդանի հաղորդակցության խաթարումը մարդկանց, հարազատների և ընկերների միջև՝ շատ հաճախ այն փոխարինելով օն-լայն հարթակում շփման ձևերով: Գիտենք, որ մարդը հասարակական էակ է և կարիք ունի շարունակական կենդանի շփումների մյուս մարդկանց հետ: Եթե դրանք խաթարվում են,ապա այն իր հետ բերում է մի շարք հոգեբանական խնդիրներ:

### 1 .2.Հանրակրթական դպրոցում ՏՏ-ի կիրառման հնարավորություններն ու առավելությունները




Ուսումնասիրություններն ցույց են տվել, որ միջին դասարաններում դասավանդվողբոլոր առարկաների, այդ թվում՝ մայրենիի դասաժամերին տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովում է դասի հետաքրքրությունն ու աշակերտների ուսումնական ներգրավածությունը: Անառարկելի է, որ ուսումնական նյութի յուրացման գործընթացը բավականաչափ հետաքրքիր չլինելու պարագայում նույն նյութը կարելի է ուսումնասիրել տարաբնույթ մեթոդներով: Այսինքն՝ ուսուցիչը, ով այս դեպքում հրահանգողի և կարգադրողի դերում է,կիրառելով այս ոչ այնքան բարդ գործիքը, կարողանում է սովորողներին ներկայացնել թեմայի ավելի ծավալուն, բայց միևնույն ժամանակ՝ մատչելի և հետաքրքրաշարժ տարբերակը



## 1.2 Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիմնական ուղղություններ

Մասնագիտական գրականության մեջ նշվում է, և մենք մեր ուսումնասիրությունների ընթացքում համոզվեցինք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում կարելի է կազմակերպել երկու ուղղություններով՝ **ցուցադրատեսողական** և **ինքնուրույն էլեկտրոնային աշխատանքի** ստեղծման: Առաջին դեպքում սովորողներն ունեն տեսածը մեկնաբանելու, դիտողություններ անելու, փոփոխություններ մտցնելու հնարավորություն: Տեքստային խմբագրիչների միջոցով աշակերտն անմիջապես տեսնում է իր աշխատանքի արդյունքները՝ համակարգիչն ընդգծում է ուղղագրական, քերականական, խոսքային ու կետադրական սխալները: Արդյունքում սովորողը տեսնում և վերլուծում է իր կատարած աշխատանքի արդյունավետությունը: Այսօր արդի ուսուցման գործընթացում կարևորում են էլեկտրոնային կրթական հարթակները: Վիրտուալ կրթական հարթակներում ստեղծվող ուսումնական ռեսուրսները բարձրացնում են սովորողների ակտիվությունը, կրթական գործընթացը դարձնում առավել արդյունավետ, իսկ արդյունքները՝ հետաքրքիր, ձևավորում են սովորողների տեղեկատվական մշակույթը [4, էջ 86-87]: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այսօր հիմնականում աշխատանքներ են իրականացվում տեղեկատվական տեխնոլոգիաները կրթական հաստատություններ ներմուծելու ուղղությամբ: Այդ նպատակով ստեղծվել են բազմաթիվ ծրագրեր, վիրտուալ հարթակներ, որոնք այժմ էլ կիրառվում են կրտսեր դպրոցականների կողմից որպես տեղեկատվական աղբյուր և ոչ միայն: Դրանք են՝ «Իմ Դպրոց», «Dasaran.am»,«ktak.am», «dshh.am», learningapps.org, kahoot.com, Innostud.am quizz, Playposit, Mind Map, «Գրադարանների համահավաք քարտարան», և այլն: Այսպես, «Dasaran.am» կրթական ծրագիրն ապահովում է կրթության հասանելիությունը հավասարապես բոլոր աշակերտներին: Կայքում առկա էլեկտրոնային օրագիրը և էլեկտրոնային մատյանը աշակերտների, ծնողների, ուսուցիչների և դպրոցի անձնակազմի համար մշակված գործիքներ են, որոնք տալիս են դպրոցականների առաջադիմությունը ստուգելու և տեղեկատվություն ստանալու, տնային հանձնարարությունների, հաճախումների, կարգապահության, կիսամյակային գնահատականների և դասավանդվող առարկաների մասին իրազեկվելու հնարավորություն[12]:

«Իմ Դպրոց» կայքը միավորում է միջնակարգ կրթության ողջ ուսումնական համալիրը, այն միաժամանակ և՛ դասագիրք է, և՛ խնդրագիրք, և՛ առաջադրանքների ու թեստերի հսկայական շտեմարան: Յուրաքանչյուր դպրոցական առարկայից «Իմ դպրոցը» պարունակում է մատչելի տեսական նյութեր, 400 -ից 700 չկրկնվող առաջադրանք, խնդիր, վարժություն և ամփոփիչ թեստ: «Իմ Դպրոց» կայքը ոչ միայն պարունակում է հարյուրավոր առաջադրանքներ ցանկացած թեմայի վերաբերյալ, այլ նաև ներկայացնում է բոլոր առաջադրանքների բացատրությունները և լուծման քայլերը[13]:

Մենք ուսումնասիրել ենք 1-9րդ դասարանների առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը՝ պարզելու համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունն ուսումնական գործընթացում:Ըստ հանրակրթական պետական չափորոշչի՝

1.«Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմանը
2.ուսուցանվող նյութը ավելի մատչելի ու գրավիչ դարձնելու, յուրացման գործընթացն արագացնելու, սովորողի ինքնուրույն աշխատանք կատարելու ունակությունները զարգացնելու,նոր տեղեկատվություն ստանալու միջոցներին տիրապետելու և ,առհասարակ, ինքնակրթության նախաձեռնությունը խթանելով նպատակով [5, էջ 7]:
3.Տեղեկատվության ժամանակակից միջոցների լայն տարածման, տեսալսողական տեխնիկայի, համացանցի, համակարգիչների գործածության, գրական երկերի էկրանավորման պայմաններում խիստ նվազել է ընթերցանության ձգտումը և ընդհանրապես տպագիր աղբյուրներից օգտվելու ավանդույթը»[5, էջ 5-6]:
Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն անհրաժեշտ է ժամանակակից դասին, սակայն դա չի նշանակում, որ այդ տեխնոլոգիաները պետք է դարձնենք ամեն օրվա դասի մի կարևոր կետ:

## 1.3 Տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կանոնները

Թեև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն արդյունավետ է, և ունի մեծ դեր ուսուցման գործընթացի բարելավման խնդրում, այնուամենայնիվ, կան սահմանափակումներ, հետևաբար տեխնոլոգիաները կիրառելիս պետք է հետևել որոշակի կանոնների՝ հաշվի առնելով սովորողի տարիքային առանձնահատկությունները: Սա համարվում է առաջին և կարևոր կանոնը, հակառակ դեպքում դասը կլինի անհետաքրքիր, իսկ կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները՝աննպատակ:Միջին դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության բարձրացման համար չափազանց կարևոր է ուսոցչի կողմից կիրառվող տեխնոլոգիաների և ընտրված մեդիաոլորտի տեսակների ճիշտ ընտրությունը և դրանց համապատասխանությունը ոչ միայն դասի թեմային, այլև ընտրված մեդիակրթության տվյալ տեսակի առանձնահատկություններին և նպատակներին [4, էջ 44-45]: Ուսումնական գործընթացում համակարգիչների կիրառմանը զուգահեռ առաջացան նաև համակարգչային խաղերը և էեկտրոնային հարթակները, որոնք իրենց գույներով ,անիմացիաներով գերեցին սովորողներին և զրկեցին նրանց բակային խաղերից:
Վիրտուալ կրթական հարթակներն ընձեռում են էլեկտրոնային նյութերն ուսուցանվող նյութի աստիճանական բարդացման մշակելու հնարավորություն՝նկատի ունենալով սովորողների ինչպես տարիքային, այնպես էլ անհատական առանձնահատկությունները: Դրանք նպաստում են սովորողների համակողմանի զարգացմանը, իմացական ոլորտի, ճանաչողական հետաքրքրությունների, բնության և շրջապատող իրականության մասին գիտելիքների ուսումնաօժանդակ ընդլայնմանը, ինչպես նաև՝ ձևավորում են ուսման նկատմանբ դրական վերաբերմունք [4, էջ 87- 88]:
Ընդ որում՝ էլեկտրոնային հարթակները, ինտերակտիվ գրատախտակները և

համակարգչային խաղերը աշակերտների մեջ մեծ հետաքրքրություն են առաջացնում:Օրինակ՝ երբ նույն թեման ուսումնասիրում ենք ավանդական մեթոդներով՝ առանց տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնային ուսումնաօժանդակ նյութերի և համակարգչային խաղերի, ամենօրյան բնույթ է կրում, իսկ դրանց կիրառման պարագայում բոլորովին այլ պատկեր է: Այս կարծիքը քննարկվեց մեր մեջ՝ուսումնասիրություններ իրականացնելու ընթացքում:Միաժամանակ ուսումնասիրությունների ընթացքում մենք համոզվեցինք, որ ուսուցիչը կկարողանա դասը ճիշտ պլանավորել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ, եթե.

1.սովորի համակարգչով օգտվել վիրտուալ կրթական մի շարք հարթակներից («Իմ դպրոց», «dasaran.am», «ktak.am», «dshh.am», learningapps.org, kahoot.com, innostud.am quizz, playposit, mind map), microsoft powerpoint, smart notebook, adobe photoshop և այլ ծրագրերից,

2.գործնականում յուրացնի գրատախտախտակի տարածքում գործիքներից օգտվելու կարգը,սովորի մեթոդապես գրագետ և տեխնիկապես կատարյալ ու ստեղծագործաբար օգտագործել ձեռք բերած գիտելիքները՝ դասերը պլանավորելու և անցկացնելու համար:

# ԳԼՈՒԽ II.

# Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման իմ փորձից փորձարարական աշխատանքի արդյունքների վերլուծություն

## 2.1 Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող դասի պլանների կազմում, դրանց փորձարկում

**Ուսումնասիրությունների նպատակը:** Ժամանակակից ուսուցման գործընթացը հաճախ է կազմակերպվում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Սրանց օգտագործմամբ ցանկացած նյութի ուսուցում աշակերտներին տալիս է ուսումնական նյութի քննարկմանը մասնակցելու հնարավորություն, որն ուղեկցվում է առարկայի նկատմամբ նրանց հետաքրքրության զարգացմամբ

**Ուսումնասիրություն խնդիրները.**

- ուսումնասիրել և վերլուծել միջին դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները,
- մշակել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող դասի պլաններ, դրանք փորձարկել մանկավարժական պրակտիկայի ընթացքում,
- վերլուծել ուսումնասիրությունների արդյունքները:

**Պատմի՛ր ինձ, և ես կմոռանամ:**

**Ցո՛ւյց տուր,և ես կհիշեմ:**

**Թո՛ւյլ տվեք դա անեմ, և ես կհասկանամ**

Հաճախ ենք լսում կարծիքներ այն մասին, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում արդյունավետ չէ: Սակայն հնչում են նաև հակառակ կարծիքներ այն մասին, որ այն արդյունավետ է: Պարզելու համար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը ,ստուգելու , թե աշակերտների մոտ ինչ մոտիվացիա է առաջացել , կազմել եմ հարցաթերթ ավանդական ուսուցման և ՏՏ վերաբերյալ, որը լրացրել են սովորողները ՏՀՏ-ների կիրառմամբ դասերը անցկացնելուց հետո: Հարցաթերթը լրացրել է 34 աշակերտ: Հարցվողներից 34-ը նշել են, որ հետաքրքիր է դասը, մնացած դասերից տարբերվում է պատկերավոր Է և հետաքրքիր, լավ է հասկանում դասը : Այն հարցին , թե ավելի ուշադիր են դասին, 34

աշակերտից 32-ը պատասխանել է այո, 1-ը՝ ոչ այդքան, 1-ը՝ոչ: Մյուս հարցին, թե ցանկանում եմ , որ բոլոր դասերը ՏՀՏ-ների կիրառմամբ լինեն, 34 աշակերտներն էլ պատասխանել են ՝ այո: Հարցվող աշակերտները գրել են , որ լավ են տպավորվել խաղվարժությունները և կցանկանան՝ շատ խաղ-վարժություններ լինեն:




Ավանդական դասավանդման ձևի հարցմանը մասնակցել էին 34 աշակերտներ: Այն հարցին, թե հետաքրքիր է ավանդական ուսուցումը, նրանցից 22-ը պատասխանել էին՝ այո, 8-ը՝ ոչ այդքան, 4-ը՝ ոչ: Մնացած դասերի նմա՞ն է .հարցին հարցվողներից 28-ը պատասխանել էին՝ այո, 4-ը ՝ոչ այդքան, 2-ը՝ ոչ: Ավելի լա՞վ եմ հասկանում դասը .հարցին 21-ը պատասխանել էին՝ այո, 9–ը՝ ոչ այդքան,4-ը ՝ոչ: Ես ավելի ուշադի՞ր եմ .հարցին հարցվողներից 25-ը պատասխանել էին՝ այո, 6-ը՝ ոչ այդքան, 3-ը՝ ոչ: Ցանկանո՞ւմ եմ , որ բոլոր դասերը ավանդական ձևով լինեն. հարցին աշակերտներից 8-ը պատասխանել է՝ այո, 4-ը՝ ոչ այդքան, 22-ը՝ ոչ:

**Տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով և առանց դրանց վարած դասերի առավելություններն ու բացասական կողմերը.**

Տրամագիր 1




Տրամագիրից երևում է, որ.

- դաս SS-ով՝ բացասական 25% , դրական 75%,
- դաս առանց SS-ի՝ բացասական 44%, դրական 56%:

Ինչպես տեսանք SS-ով դասը ունեցավ 75% դրական կողմ, իսկ առանց SS-ի դասը 56%: Համեմատելով այս երկու դասերը և ստացված արդյունքը՝ կարող ենք ասել որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնում է մայրենիի դասերի արդյունավետությունը:

Որպեսզի ցույց տամ, թե դասի որ փուլին ինչքան ժամանակ եմ հատկացվում կազմել եմ տրամագիր, որտեղ ցույց եմ տվել դասի փուլերի տևողությունն՝ ըստ ԽԻԿ համակարգի: Այս նպատակով մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարած դասալսումները և մեր վարած դասերը քննարկել ենք և ունեցել հետևյալ արդունքները

Տրամագիր 2




Մայրենիի դասերի փուլերի տևողությունն ըստ ԽԻԿ համակարգի.

Արդյունքը ներկայացրել ենք տրամագրի միջոցով.

- խթանման փուլ՝ 10 րոպե,
- իմաստի ընկալման փուլ՝ 30 րոպե,
- կշռադատման փուլ՝ 5 րոպե:

Վերլուծելով արդյունքները եկանք այն համոզմունքին, որ մայրենիի դասերի ընթացքում հիմնական աշխատանքներն իրականացվում են խթանման և իմաստի ընկալման փուլերում, դրա համար էլ դասի այդ փուլերին տրամադրվում է շատ ժամանակ:

Այսպիսով, եթե դասը պլանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, ապաառաջարկում եմ դրանք կիրառել խթանման և իմաստի ընկալման փուլերում, որովհետև հենց այս փուլերում ենք մենք հասնում մեր առաջ դրված նպատակներին և խնդիրներին, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաները կնպաստեն դրանց ավելի դյուրին իրականացմանը, ուսումնական նյութի նկատմամբ սովորողների հետաքրքրության առաջացմանը: Հենց այս փուլերում ենք մենք հասնում մեր առաջ դրված նպատակներին և խնդիրներին, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաները կնպաստեն դրանց ավելի դյուրին իրականացմանը, ուսումնական նյութի նկատմամբ սովորողների հետաքրքրության առաջացմանը:

# Եզրակացություն

Տեղեկատվական տեխնոլոգիաները մայրենիի դասերին կիրառելու վերաբերյալ գրականության ուսումնասիրությունից և ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունից ելնելով, գալիս ենք հետևյալ եզրակացությունների, որ.

1.Մեթոդական գրականություններ ուսումնասիրելով՝ պարզեցինք, որ գրեթե չկան ճշտգրիտ ցուցումներով մեթոդական ուղեցույցներ, որոնք կօգնեն միջին դասարանների ուսուցչին, դրանք մայրենիի դասընթացում ուսումնական նյութի, լեզվական նյութի ուսումնասիրման ժամանակ կիրառելուն:

2.Ուսումնասիրելով վիրտուալ կրթական հարթակների գործածման գործընթացները՝ եկանք այն եզրահանգման, որ տեղեկատվական տեխնոլոգիաներով կազմակերպված դասերը բարձրացնում են ուսումնական գործընթացի արդյունավետությունը, նպաստում են ուսումնական նյութի նկատմամբ սովորողների հետաքրքրության և ուսումնական դրդապատճառների առաջացմանը:

3.Մշակել ենք դասի պլաններ ՏՏ-ով և առանց ՏՏ-ի: Համեմատելով այս երկու դասերը և ստացված արդյունքները՝ եկել ենք այն եզրահանգման, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնում է մայրենիի դասերի արդյունավետությունը:

4.ՏՏ-ը կիրառել խթանման և իմաստի ընկալման փուլերում, որովհետև հենց այս փուլերում ենք մենք հասնում մեր առաջ դրված նպատակներին և խնդիրներին, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաները կնպաստեն դրանց ավելի դյուրին իրականացմանը, և ուսումնական նյութի նկատմամբ սովորողների հետաքրքրության առաջացմանը:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ դասարանում ՏՀՏ կիրառմամբ կրթական գործընթացը միտված է տրամաբանական և քննադատական մտածողության երևակայության և անկախության զարգացմանը: Եզրափակելով, ես ուզում եմ անել հետևյալ եզրակացությունը. Ուսուցիչը ներկայումս կարիք ունի սովորել օգտագործել համակարգչային տեխնոլոգիան, ճիշտ այնպես, ինչպես նա այսօր օգտագործում է գրիչ կամ կավիճ դասի վրա աշխատելու համար:Կարողանա ստեղծել սեփական տեղեկատվական տեխնոլոգիաներ և հմտորեն կիրառել, ձեռք բերված գիտելիքները և հմտությունները՝ դասի մեթոդաբանությունը կատարելագործելու համար: Ուսուցչի համար համակարգիչն այլևս շքեղություն չէ ,այլ՝ գործիք: Մարդը, ով տիրապետում է տեխնոլոգիային և տեղեկատվությանը,ունի այլ,նոր ոճ,կարող է այլ կերպ մոտենալ ծագած խնդրի գնահատմանը, դրանց կազմակերպմանը:

## Գրականության ցանկ


1. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա.,Շարխաթունյան Հ.; Նախաբ.՝

Լ. Ռոբերտսոն, Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում ուսումնական ձեռնարկ, Երևան 2004, էջ 25:

2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:
3. Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ. Հ., Պողոսյան Լ. Մ., Ասատրյան Ս. Մ.,

Կարապետյան Ն. Ջ., Ավագյան Լ. Մ., Մեդիակրթությունը դպրոցում, Երևան 2019, էջ 44-45, 86-87:

4. ՀՀ կրթական չափորոշիչներ, Անտարես 2011, էջ 6-7:
5. Մերենյի Ադամ, Սաբո Վինցե, Տակաչ Աթիլլա,Jedlik Oktatási Stúdió, «101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար»

Բուդապեշտ, 2006թ. , էջ 1, էջ 35:

6. Ստեփանյան Ռ., Չիբուխչյան Կ., Բալայան Ա., Էլեկտրոնային կրթական

պաշարների և թվային տեխնոլոգիաների կիրառումը դպրոցում ուսուցչի ձեռնարկ, Երևան 2018, էջ 7:

7. Яковлев А.И. Информационно-коммуникационные технологии в образовании. 2005 г., 14 с.
8. Мухина С. А., Соловьева А. А. Современные инновационные технологии обучения. М.: 2008, 360 с..
9. Davis, N.E., & Tearle, P. (Eds.). (1999). A core curriculum for telematics in teacher

training. Available at: www.ex.ac.uk/telematics.T3/corecurr/tteach98.htm

10. https://www.dasaran.am/apps/s/about

https://www.imdproc.am/p/tht-gragitutyun/norarar-tht-dasyntac/himnakan-dasyntaci-

Հավելված

## ԴԱՍԻ ՊԼԱՆ

**Դասարան՝** 6-րդ

**Առարկա՝** Մայրենի

**Թեմա՝** Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վեպից հատված. բովանդակությունը և դիպաշարը

**Նպատակներ՝**

• գաղափար տալ տեքստում պատկերված ինքնակենսագրական պատումի, կորուսյալ հայրենիքի, հուշի, հայրենի ավանդույթների մասին

•ընդհանուր պատկերացում տալ դիպաշարի մասերի վերաբերյալ

• նպաստել հատվածները ստեղծագործաբար և պատկերավոր ներկայացնելուն, սեփական կենսագրական պատում ստեղծելուն

**Խնդիրներ՝**

•ընդհանրություններ գտնել վերնագրի և բնագրի միջև, առանձնացնել հիմնական գաղափարն արտահայտող հատվածները և վերնագրել

• նշել դիպաշարի մասերի բնութագրիչ հատկանիշները, գտնել դրանք տվյալ հատվածում

• բանավոր կամ գրավոր որևէ կերպարի անունից ներկայացնել տվյալ հատվածը այլ վերջաբանով՝ կատարելով նկարագրդումներ, ընտրել համապատասխան մեղեդի

**Վերջնարդյունքներ՝**

• կարողանա բացահայտել տեքստի գլխավոր գաղափարը, ներկայացնի դիպաշարի մասերը՝ ըստ տվյալ հատվածի
•տարբերի հատվածի լեզվաոճական առանձնահատկությունները
• կարողանա հատվածը վերարտադրի, ներկայացնի տարբեր կերպարների անունից, ստեղծագործական հավելումներ կատարի
•ձևավորի բարոյական արժեհամակարգ
• կարողանա առանձնացնի կերպարների արտաքինը նկարագրող, բնավորության գծերը բացահայտող պատկերները՝ համեմատելով իր հարազատների հետ՝ շեշտելով ընդհանրությունները
• կարողանա հորինել հերոսների բնավորությունն արտահայտող խորհրդանիշներ,գրի նկարագրական բնույթի շարադրանք կամ նկարի նրանց
•ստեղծի սեփական ինքնակենսագրության պատառիկներ

**Ձևավորող կարողունակություն՝**

• լեզվական գրագիտություն

•սովորել սովորելու կարողունակություն

•ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

•Թվային և մեդիա կարողունակություն

•Մշակութային կարողունակություն

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ՝**անհատներ և հարաբերություններ, ժամանակ և տարածություն, պատճառ և հետևանք

**Կիրառվող մեթոդներ՝** ներածական զրույց, մտագրոհ, բանալի բառեր,սահիկահանդես, կրկնակի գրառումների օրագիր, քառաբաժան, բառային և տեքստային աշխատանք

**Անհրաժեշտ նյութեր՝**դասագիրք, Թոթովենցի դիմանկար, տետր, նշագրիչներ, կպչուն թղթեր և այլն

**Միջառարկայական և ներառարկայական** կապեր՝հայոց լեզու, կերպարվեստ, երաժշտություն, հայոց պատմություն

**Տնային աշխատանք՝** արտահայտիչ կարդալ, պատմել, ստեղծել ինքնակենսագրական պատումի պատառիկներ,

**Տևողությունը՝ 2 դասաժամ**

## ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

**Առարկան՝** Մայրենի
**Դասարան՝** 6-րդ
**Դասի թեման՝** Հ. Շիրազ «Մայրս փոքրիկ, մայրս խեղճ»

**Դասի նպատակները և խնդիրները**

**ա) ակադեմիական**

- Իմանալ Հ. Շիրազի մասին կենսագրական տեղեկություններ:
- Անգիր իմանալ բնագիրը, իմանալ անծանոթ բառերի բացատրությունը:
- վերհանել բանաստեղծության հիմնական գաղափարը, վերլուծել, կարծիք հայտնել:

**բ) սոցիալական**

- Պատասխանել հարցերին:
- Ինքնուրույն ձևակերպել հարցեր:
- Հայտնել ինքնուրույն կարծիք մոր դերի մասին

**Անհրաժեշտ պարագաներ՝** «Հուշարձան մայրիկիս» ժողովածու: Ցուցադրական նյութեր՝ Շիրազի և իր մոր լուսանկարը,տիրամոր նկարը՝բալիկը գրկին:

**Միջառարկայական կապ** «Երաժշտություն» «Կերպարվեստ»

**Վերջնարդյունքներ**

- արտահայտիչ ընթերցի,անգիր արտասանի բանաստեղծությունը
- արժևորի մոր կերպարը
- արձակ շարադրանքով ներկայացնի բանաստեղծության բովանդակությունը
- կատարի ինքնաստեղծագործական աշխատանք
- գործածի նորածանոթ բառերը,հիշի հոմանիշները

**Ձևավորող կարողունակություն՝**

- լեզվական գրագիտություն
- սովորել սովորելու կարողունակություն
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Թվային և մեդիա կարողունակություն
- Մշակութային կարողունակություն

**Կիրառվող մեթոդներ՝** մտքերի տարափ/յուրաքանչյուրը մեկ բառով բնութագրում է իր մայրիկին/,սահիկաշար,5ր–ոց շարադրանք,ակրոստիկոս,Т-աձև աղյուսակ,հարց ու պատասխան

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ՝** օրինաչափություն,կայունություն և փոփոխություն,պատճառ և հետևանք

**Դասի ընթացքը** /ներածություն.մուտք,հաճախումներ,կահավորում,տնային աշխ. ստուգում/

**Խթանման փուլի նկարագրությունը և տևողություն /5ր/**

Յուրաքանչյուրը մեկ բառով բնութագրում է իր մայրիկին, գրատախտակին նկարած արևի շողերի վրա գրում ենք բառերը ,կենտրոնում՝ ՄԱՅՐՍ:

**Իմաստի ընկալման փուլի** նկարագրությունը և տևողությունը **/35ր/**

Դիտել փոքրիկ սահիկահանդեսը,ապա կարդալ բնագիրը և պատասխանել հետևյալ հարցերին՝

- Զգացի
- Տեսա
- Նկատեցի

ՄԱՅՐՍ բառով գրել դասարանական ակրոստիքոս/աշակերտները ասում են բանաստեղծական տողեր,ընտրում ենք լավագույնը և գրում գրատախտակին՝պահպանելով հանգավորումը/:
Հաջորդիվ խմբային քննարկումների մեթոդով թույլ տալ, որ սովորողները քննարկեն մոր թեման, խոսեն իրենց մայիրիկներից, փորձեն կապ գտնել բանաստեղծության և իրենց զգացողությունների միջև: Այսպես սովորողների մեջ ձևավորվում է բարձր արժեքային համակարգ:

Կհնչի երաժշտական դադար/ երգ մայրիկի մասին/: Կհանձնարարվի գրել բանալի բառեր մոր մասին և դրանցով կազմել նախադասություններ: Սովորողները կկատարեն բառային և տեքստային աշխատանք տեքստի շուրջ:

**Կշռադատման, գնահատման փուլի նկարագրությունը և տևողությունը/3ր/**

Աշակերտները սրտառուչ խոսքեր կնվիրեն իրենց մայրիկներին: Դասի ավարտին կլրացնեն ԳՈՒՍ աղյուսակը: Ակտիվ աշակերտները կգնահատվեն:

**Տնային հանձնարարություն /2ր /** Գրել փոքրիկ հետազոտական աշխատանք՝ «Մոր թեման հայ պոեզիայում»:

## ԴԱՍԻ ՊԼԱՆ 3

**Առարկան՝** Մայրենի
**Դասարան՝** 5-րդ
**Դասի թեման՝** «Տառի, հեռախոսի ու համակարգչի վեճը »

**Նպատակ՝** **Ծանոթացնել** ժամանակակից հեղինակների ստեղծած հեքիաթի առանձնահատկություններին:
**Բացատրել** ստեղծագործության միտքն ու գաղափարը, հնարավորություն տալ աշակերտին սեփական բառերով արտահայտելու լսածն ու հասկացածը:
**Զարգացնել** սովորողի՝ ստեղծագործության բովանդակությունը սեփական և հեղինակային բառապաշարով ներկայացնելու կարողություններ և հմտություններ:

**Զարգացնել** տեքստը վերլուծելու կարողություններ:

**Խթանել** սովորողի հաղորդակցականկարողությունների զարգացումը:

**Ձևավորե**լ որոշակի վերաբերմունք և արժեքային համակարգ:

**Արժևորել** գիրը,ձեռագիրը,մարդկանց կենդանի շփումը,բակային խաղերը,առողջությունը և այլն:

**Վերջնարդյունք՝** **Վերաշարադրի** հեքիաթի բովանդակությունը՝ ըստ պլանի և ստեղծագործաբար:
**Ներկայացնի** հեքիաթի գաղափարը սեփական բառերով:

Բնագրում **գտնի** գլխավոր գաղափարն արտահայտող նախադասությունը:
**Բնութագրի** հեքիաթի հերոսներին՝ ըստ նրանց արարքների: **Արդարացնի** կամ **մեղադրի** կերպարներից յուրաքանչյուրին:

**Համեմատի** տարբեր հեքիաթների տեքստեր, հերոսներին,

**նշի** նրանց տարբերությունները, նմանությունները:

**Ընկալի** հեքիաթի դաստիարակչական նշանակությունը անձի ձևավորման գործում:

**Ձևավորող կարողունակություն՝**

- լեզվական գրագիտություն
- սովորել սովորելու կարողունակություն
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Թվային և մեդիա կարողունակություն
- Մշակութային կարողունակություն

**Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ՝**անհատներ և հարաբերություններ, ժամանակ և տարածություն, կայունություն և փոփոխություն, պատճառ և հետևանք

**Կիրառվող մեթոդներ՝** ներածական զրույց, Т-աձև աղյուսակ/համակարգչի դրական և բացասական ազդեցությունը/,հարց ու պատասխան/Ո՞րը կնախընտրես՝հեռախո՞սը,թե՞ համակարգիչը,ինչո՞ւ/5ր–ոց շարադրանք/Ի՞նչ կարևոր դեր ունի հեռախոսը կամ

համակարգիչը քո կյանքում/,Վենի տրամագիր /տառ և համակարգիչ/,/տանտիրոջ վարքագիծը՝ստեղծագործական աշխատանք /,մնջախաղ՝խմբային /:

**Տնային աշխատանք** ՝ կարդալ,գտնել հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը